ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 677-Ն	Տեսակը	Այլ
Տիպը	Որոշում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.06.14/31(486) Հոդ.636	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը	26.05.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	27.05.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը	01.06.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15.06.2006	Ուժը կորցնելու ամսաթիվը	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
1 հունիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2006 թվականի N 677-Ն

ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N 686-Ն որոշման պահանջները, ինչպես նաև ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ֆինանսավորումն ապահովելու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝ ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ֆինանսավորումն իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնակարգին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2006 թ. մայիսի 27
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի

մայիսի 26-ի N 677-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՋՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ֆինանսավորումն ապահովելու կանոնակարգը:

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձնաժողովը (այսուհետ՝ տեխնիկական հանձնաժողով) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված գումարների սահմաններում՝ իր որոշմամբ հաստատում է՝

ա) տեխնիկական հանձնաժողովի աշխատակազմի թվի, հաստիքացուցակի և աշխատավարձերի դրույքաչափերի վերաբերյալ առաջարկությունները.

բ) նյութական պատասխանատու անձին (անձանց), որին (որոնց) պետք է տրամադրվեն տեխնիկական հանձնաժողովի պահպանման համար անհրաժեշտ ապրանքանյութական արժեքները.

գ) պաշտոնի նշանակման ու պաշտոնից ազատման, գործուղման և այլնի վերաբերյալ առաջարկությունները.

դ) կատարված ծախսերի մասին ամսական հաշվետվությունները:

3. Սույն կանոնակարգի 2-րդ կետի «ա» ենթակետում նշված առաջարկությունները ենթակա են հաստատման՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի կողմից:

4. Տեխնիկական հանձնաժողովն իր որոշումները համապատասխան առաջարկությունների հետ միասին ներկայացնում է կոմիտե:

5. Կոմիտեի աշխատակազմը, ստանալով տեխնիկական հանձնաժողովի առաջարկությունները, աշխատակազմի ղեկավարի հրամանով պաշտոնի է նշանակում տեխնիկական հանձնաժողովի աշխատակազմի անդամներին՝ համաձայն հաստիքացուցակի, և կնքում համապատասխան աշխատանքային պայմանագրեր, որոնց հիման վրա կատարում է աշխատավարձերի, հարկային և սոցիալական ապահովագրության վճարների, ինչպես նաև գործուղումների վճարումները:

6. Տեխնիկական հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ գնումներն իրականացվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, կոմիտեի միջոցով՝ կնքված համապատասխան պայմանագրերի համաձայն:

7. Տեխնիկական հանձնաժողովի համար ձեռք բերված ապրանքների ու մատուցված ծառայությունների հաշիվ-ապրանքագրերը, մատակարարների կողմից հանձնման- ընդունման ակտերն ստորագրում են կոմիտեի աշխատակազմի ղեկավարը և կոմիտեի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը:

8. Կոմիտեն համապատասխան գումարները փոխանցելու նպատակով՝ ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, որը նշված փաստաթղթերի հիման վրա իրականացնում է ֆինանսավորումը:

9. Տեխնիկական հանձնաժողովը պարտավոր է յուրաքանչյուր ամիս՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը կոմիտե ներկայացնել հաշվետվություն ստացած գումարների, ինչպես նաև ապրանքների և մատուցված ծառայությունների մասին:

10. Տեխնիկական հանձնաժողովի պահպանման ծախսերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառումն իրականացնում է կոմիտեն՝ վարելով առանձնացված հաշվառում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան